

Ավագ դպրոցում, հատկապես XII դասարանի II կիսամյակում, շատ հարմար է՝ իբրև կրկնություն և գիտելիքի ամրապնդում օգտագործել դասախոսությունը: Ստորև ներկայացնում ենք IX և XI դասարաններում անցած նյութ՝ «Սպասման թեման Մ. Մեծարենցի «Ծիածան» ժողովածուում»: Դասախոսությամբ տեղեկատվական և համակարգված նյութ է փոխանցվում աշակերտներին, արագ և ընկալման համար հեշտ հաղորդակցում է ապահովում, թույլ է տալիս ավելի հստակ վերահսկելու պարապմունքի ժամանակը, ասելիքը փոխանցվում է տրամաբանական հերթականությամբ, և, վերջիվերջո, մեծաքանակ խմբի (մոտ 30 աշակերտ) հետ աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում: Դասախոսության նյութն ընթերցվում է բարձրաձայն, արտահայտիչ՝ երբեմն տրվելով լրացուցիչ բացատրություններ:

## Սպասման դրաման «Ծիածան» ժողովածուում

1906թ.-ին Մեծարենցը կազմեց և հրատարակության հանձնեց իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն, որը պետք է լույս տեսներ «Ոսկի արիշին տակ» վերնագրով: Սակայն գրաքննությունն արգելեց այդ վերնագրով գիրք հրատարակել, և Մեծարենցն իր ժողովածուն վերանվանեց «Ծիածան»: «Ծիածան»-ի ի հայտ գալը հատուկ հողվածներով նշեցին արևմտահայ գրեթե բոլոր թերթերը: Ընդգծելով պատանի բանաստեղծի անժխտելի տաղանդն ու արժանիքները՝ քննադատների մեծ մասը հույս ու հավատ էր հայտնում նրա ստեղծագործության փայլուն ապագայի նկատմամբ: Պոլսի թերթերից մեկում մի քննադատ գրում էր. «Մեծարենցի տաղերը համբույրի մը թարմություն ունին և նարդոսի բույր մը, որ կը զգլիս»: Իսկ բանաստեղծ և քննադատ Արտաշես Հարությունյանը նշում է. «Մ. Մեծարենցը լավ բանաստեղծ մըն է և առաջին հարվածով իսկ իր դեմքը կը հատկանշվի արդի նոր պորսահայ բանաստեղծներու շարքին մեջ... Ասիկա ճշմարիտ բանաստեղծ մըն է, խորին ու մարդկային անկեղծությամբ մը

բաբախուն... Այս նորեկին մեջ՝ սրտագրավ ու ջերմաշունչ տաղանդավոր քերթող մը կը հայտնվի, որ ապահովապես գրական խիստ ուշագրավ ապագա մը կը խոստանա»։ Նախքան ժողովածուի լույս տեսնելը 1906թ.-ի հոկտեմբերին Մեծարենցը գրել է «Ինքնադատության փորձ մը» հոդվածը՝ նկատի ունենալով ընթերցողին ներկայացնել սեփական դիտողություններն իր ստեղծագործության բնույթի և առանձնահատկությունների մասին։ Ի՞նչ զգացումներ են տիրապետում Մեծարենցի պոեզիայում, ավելի ճիշտ՝ ի՞նչ ուղղությամբ են ընթանում այդ զգացումները, ո՞րն է կենտրոնականը և էականը բանաստեղծի բարդ ու ծանր ապրումների աշխարհում։ Ինքը՝ բանաստեղծը, սպառիչ է բնութագրել իր աշխարհը՝ իր էությունը՝ «Սպասման հիվանդ եմ»։ «Մպասում» բառը անդադար ձուլվում է բանաստեղծական հյուսվածքներին՝ ամենուր ստանալով հոգեբանական հատուկ իմաստ, ստեղծելով թանձր մթնոլորտ։ «Լուսաբաղձ հիվանդ»՝ այսպես է ինքն իրեն բնորոշել պատանի բանաստեղծը։

...Դարձիր քի՛չ մըն ալ ժպտե սա՛ լուսաբաղձ հիվանդին՝  
Որ քիչ առ քիչ կը մեռնի՛ կառչած իր խոլ հույսերուն...  
«Մթնշաղներ»

Մպասումը դառնում է կենտրոնական զգացում, տիրապետող զգացում, թափանցում գրեթե բոլոր խոհերի, բոլոր պատկերների մեջ։ Նա կառչում է կենսական բոլոր ակունքներին, բոլոր հենարաններին։ Այդ բարդ ու ծանր մթնոլորտում նա ապրում էր հիասթափություններ, հուսահատ, խենթ բռնկումներ։ Առերևույթ խաղաղ թվացող մարդու հոգին փոթորկվում է տրամադրություններից և երազներից, և մենք զգում ենք՝ կյանքի ցրտի ու մենության մեջ ինչպես է երազում, սիրում ու տառապում դատապարտված մարդը, ինչ սարսափներ է ապրում, ինչ երազներ տեսնում։ Նրա երգերը ներծծվում են հայտնի ու անհայտ, շատ զուլալ և շատ խորհրդավոր մանրամասներով։

Երազանքի հանգրվան գտնելու համար Մեծարենցի քնարական հերոսը ճանապարհորդում է օրվա բոլոր պահերի միջով՝ մթնշաղ, իրիկուն և գիշեր, ցայգալույս,

առավուտ և բարկ կեսօր: Այս տարբեր տեսարանները դրոշմված են նրա բանաստեղծությունների, հատկապես՝ «Ծիածանի» էջերում: Սակայն եթե Տերյանի քնարական հերոսի համար ամենից գերադասելին մթնշաղն ու արևածագն են՝ լույսի ու մութի խորհրդավոր խաղերով, ապա Մեծարենցն ամենից ավելի հակված է դեպի գիշերը: Այդ հակումն ամենից ցայտուն է արտահայտվել «Ծիածանի» մեջ, որի բանաստեղծություններից մեծ մասը կապված է իրիկնային և գիշերային տեսարանների հետ: Բայց նա սովորական իմաստով գիշերերգու չէ, ինչպես ինքն է ասում՝ «հոգու նավորդ, իդեայի որսկան»: Ինչու՞ է բանաստեղծն այդքան հաճախ խորասուզվում գիշերային մթության մեջ: Մեծարենցը շատ խորն է ապրում պոեզիայի հավերժական մոտիվներից մեկը՝ գեղեցիկ երազանքի և շրջապատի իրականության հակադրությունը: Եվ նա որոնում է այն հանգրվանը, ուր կարող է պահպանել իր տենչերը, ապրել նրանց տևական հմայքով: Այդ հանգրվանը գիշերվա լռությունն է, երբ կյանքի անհրապույր պատկերները մի պահ մոռացվում են, և բանաստեղծը հանձնվում է սիրո և անդորրության երազներին: «Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երազները ավելի վառ ու արագ վերթնումներ կունենան. Գիշերին մեջ, ուր շրջանկարը այնքան՝ հմայիչ կըլլա, և սպասումը՝ այնքան՝ քաղցրորեն տաժանագին», - գրել է բանաստեղծը: Հետևաբար, նա դիմում է գիշերվա պատկերներին ոչ թե խավարով պարուրվելու և ննջելու, այլ տենչերի հմայքն ու սպասումների քաղցրությունը լրիվ զգալու, «հիվանդ հոգին անդորրով պատմուճելու» համար: Գիշերը Մեծարենցի համար մի անսահման «ցնորոտ անդորրություն» է, երբ դադարել, լռել են ցերեկվա բոլոր ժխորային ձայները, և բանաստեղծի՝ երազներով լեցուն հոգին կարող է անկաշկանդ ճախրել եթերային կապույտում՝ հասնելով մինչև «ադամանդ աշխարհներու» ցանկալի դռները («Կապույտ Հաճումներ»):

Այդ տրամադրությունների բացահայտման առումով հիրավի դասական գործ է «Ձմրան պարզ գիշեր» բանաստեղծությունը, որով սկսվում է ժողովածուն: Բնապաշտ ու սիրատենչ, երազներով ու իդներով լեցուն անհատը և գիշերային բնությունն իր անսահմանությամբ, իր խորհրդավոր ու կախարդիչ ձայներով և գույներով. այս է բանաստեղծությամբ հիմքում դրված «քնարական իրադրությունը»: Դա մի հիմն-

մենախոսություն է՝ ձևավորված «ցնորաբեր գիշերվան»: Բացված պատուհանից գիշերը ներս է խուժել իր «լույսի տարփանքով» ու «գով շաղերու թաց կախարդանքով», և բանաստեղծն իր համբույրն է հղում անպատմելի հմայքներ պարզևող գիշերվա անսահմանությանը.

Պարզ, լուսածածան, հրաշալի՛ գիշեր,

Հոսե՛ր սրտիս մեջ դյուխանքիդ ալիք.

Ճերմակ երազիդ ցուքերեն մեղրիկ

Պուտ-պուտ կաթեցուր հոգվույս սիրաջեր:

Գիշերը ինքնամոռացման, էքստազի, հոգևոր սրբաձության մի պահ է, երբ քնարական հերոսը ձուլվում է մեծ բնությանը, դառնում նրա իմաստուն հոգու մի մասնիկը.

Ցնորաբե՛ր գիշեր, ա՛հ, ընդունե՛ր զիս,

Ընդունե՛ր, միստիք ո՛վ անդորրություն,

Իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն,

Եվ համբույրն անանց՝ զոր կուտա հոգիս:

Գիշերվա մի հոյակապ ձոն է նաև նշանավոր «Միրերգ» բանաստեղծությունը: Գիշերը հարազատ և սիրելի է բանաստեղծին ոչ միայն այն պատճառով, որ նա «հաշիշով օծուն և բալասանով» կարող է նրա վերքերը բուժել, այլև այն, որ գիշերվա մեջ նրա համար բացվում է մի «լուսեղեն ճամփա»: Բայց ինչու՞ է բանաստեղծությունը կոչվում «Միրերգ», երբ սիրո մասին իսկապես խոսք չկա: Անշուշտ այն պատճառով, որ գիշերն իր բերած անանուն համբույրներով մի պահ հագեցնում է սիրո ծարավով լեցուն նրա հոգին.

Համբույրներ կուգան հովեն ու ծովեն,

Համբույր լույսեն՝ որ չորս դիս կը ծաղկի,

Այս գիշեր Տոն է հոգվույս՝ Կիրակի,

Համբույրներ կուգան հովեն ու ծովեն:

Սակայն «ցնծագին գիշերվա» պատկերը միաձուլվում է մոտեցնող մահվան ողբերգական սպասման և սիրո անհնարինության գիտակցության հետ.

Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կմաշի՝

Շրթունքս են ծարավ միակ համբույրին...:

Եվ բանաստեղծության ամբողջությունից մեզ է փոխանցվում խորապես դրամատիկ մի ապրում-պատկեր:

Մեծարենցի «գիշերային» բանաստեղծություններում ամենից շատ խոսվում է լույսի աղբյուրներ որոնելու մասին: Բանաստեղծի համար գիշերային «Մութի տակ լոկ նինջ մը կա լուսանվեր», և փարվելով գիշերվան՝ նա չի ուզում թաղվել ու մոռացվել անանց խավարում, այլ տենդոտ, անհանգիստ հայացքով փնտրում է շողի ու լույսի շատրվաններ, որոնք մարմնավորում են կյանքի ու կենսասիրության գաղափարը: Այս միտքն արտահայտված է «Երագի պահեր» բանաստեղծության մեջ.

Ես կսպասեմ հորդ ու վրճիտ լույսերուն,

Որոնց բացը պիտի ցոլա անծիր ցայգուն մեջ հոգվույս:

## Մեծարենցը՝ որպես արևի երգիչ

Այստեղից արդեն մի քայլ է մինչև այն երգերը, որոնց մեջ փառավորվում են արևի լույսն ու կենդանացնող շունչը: Ջարմանալի չէ, որ գիշերվան այդքան շատ էջեր նվիրած բանաստեղծը միաժամանակ հանդես է գալիս իբրև **արևի երգիչ**, դավանում է մի յուրօրինակ արևապաշտություն. չէ՞ որ գիշերն էլ նրա համար լույսի ու շողի որոնման ճանապարհ է: Եթե գիշերվան նվիրված բանաստեղծություններն ընդհանուր առմամբ արտահայտում են մռայլ իրականությունից և կյանքի աղմուկից հեռանալու ցանկություն, ապա արեգակին և արեգակի կենարար լույսին ձոնված բանաստեղծություններում ձգում էս մի բուռն ձգտումով դեպի կյանքը: «Պարզկա ցայգուն անուրջին մեջ լվալ կուզիմ հիմակ հոգիս», - գրում է Մեծարենցը:

Արևին նվիրված բանաստեղծությունները («Այգերգ», «Ցայգն է պայծառ», «Առտվան արևին մեջ», «Արևին», «Տերևները կըսեին», «Կերթա արևն իր զատիկին» և այլն) աչքի են ընկնում կյանքը, լիարյուն և կենդանի կյանքը վայելելու բուռն ցանկությամբ, արեգակի ճառագայթների մեջ կենդանանալու, վերածնվելու «խանդավառ ու բաղձալից» տենչանքով: «Այգերգ» բանաստեղծության մեջ բանաստեղծը բացականչում է.

Պիտի ըմպե՛մ բոցն արևին, ճառագայթի՛ եմ ծարավի.

Պիտի ծրծեմ բույրն առտվան՝ հոգվույս համար՝ որ հիվանդ է.

Հոգվույս համար՝ որ կ'երազեր գգվոտ ու մեղմ շունչն հարավի,

Պիտի ըմպե՛մ բոցն արևին, ճառագայթի՛ եմ ծարավի:

Արևի գալուն նա սպասում է մի առանձին խանդավառությամբ ու սիրով՝ տեսնելով նրա մեջ իր բոլոր իդալերի պսակումը:

Այդ տրամադրություններն իրենց ամբողջական արտահայտությունն են գտել «Արևին» բանաստեղծության մեջ, որի մասին Մեծարենցը գրել է, թե այստեղ «հեշտագին, գրեթե այրող ջերմություն մը կա»: Իսկ ժամանակի որոշ քննադատներ այդ բանաստեղծությունը

համարել են պոետի տաղանդի ամենավառ փայլատակումներից մեկը: Դա «քերթողական մրրիկ մըն է, ուժգին, հզոր, այնքան սանձարձակ, որ ոտանավորի կանոնները ջախջախված, բեկանված են իր շունչին տակ», - գրում է Ժամանակի քննադատներից մեկը: Հազիվ իսկական կյանքի շեմին հասած և արդեն մահվան անդունդը դիմավորող երիտասարդ բանաստեղծի կենսասեր տենչերը, կյանքի անգուսպ սերը, իրոք, ամենից ուժեղ այստեղ են դրսևորվել: Մեծարենցը հասնում է արևին՝ իբրև կյանքի, ջերմության, անանց մարդասիրության և բարության հավերժական աղբյուրի, շատ տպավորիչ պատկերման ու հզոր փառաբանման: Մի կողմից՝ կորստյան տագնապ, մյուս կողմից՝ ապրելու անգուսպ տենչ, մի կողմից հոգու՝ արևին կարոտ թռչնակի թայրտոց, մյուս կողմից՝ բոցավառ ճառագայթներին կապվելու անվերջ ձգտում. ահա հիվանդ հոգու ներքին շարժումը, որից ծնվում է բանաստեղծությունը:

«Արևին» բանաստեղծությունը հնչում է իբրև արեգակին ձոնված մի հիմն՝ տոգորված բազմազան հույզերով ու երանգներով՝ սիրակարոտ, կենսասեր հոգու տարփանք ու խանդադատանք, մոտեցող մահվան ճակատագրական միտք և արևի ու կենդանության թևատարած, կրքոտ սպասում, արեգակի բոցեղեն ցանցերի և կիզիչ համբույրների՝ շոշափելիության աստիճան անմիջական զգացողություն... Իսկ մի քանի անգամ կրկնվող այդ կոչերը՝ «Շողա՛, Շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ», ցնցում են մարդկային հոգին իրենց արտահայտած պաղատանքի անկեղծությամբ և զգացմունքի ուժով: Եվ եթե իրեն չի վիճակված փրկվելու մահվան՝ այդ «տամուկ գիշերի» ճիրաններից, ապա նա ուզում է գոնե վերջին պահին էլ զգալ արեգակի ճառագայթող ջերմությունը.

Վերջին անգամ մըն ալ,

Դեռ իրիկուն չ'եղած

Ու դեռ տամուկ գիշերին վրիուկը զիս չ'ընդգրկած,

Վերջին անգամ մըն ալ

Փարե հոգվույս խանդաբորբ ու կաթոզին,

Հիվանդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛...

Իր աշխարհագրացողությամբ և բանաստեղծական ըմբռնումներով Մեծարենցը գերազանցապես լավատես է: Նա լավատեսական հայացք ունի կյանքի նկատմամբ՝ չնայած այն ծանր ճակատագրին, որ վիճակվել է նրան՝ հասարակական շրջապատի մոայլ նկարագիրը, դաժան հիվանդությունը, որը տանում է դեպի անխուսափելի վախճան: Մեծարենցի երգերում, իհարկե, քիչ չեն թախծոտ և մոայլ տրամադրությունները, կան նույնիսկ հոռետեսական առանձին պահեր: Բայց նրանք երբեք լիովին չեն տիրապետում բանաստեղծի հոգուն, այլ միշտ ներքին պայքարի մեջ են լավատեսական ձգտումների հետ և, ի վերջո, հաղթահարվում են: Համարյա միշտ հաղթում է այն գիտակցությունը, որ պետք է ապրել և արիաբար տոկալ կյանքի հարվածներին, երբեք չդավաճանել մարդու և բնության նկատմամբ հումանիստական լայնախոհ հայացքին: Հատկանշական է այս տեսանկյունից «Վերադարձի երգը»: Սկզբում բանաստեղծը խոսում է իր վիրավոր սրտի տառապանքի մասին.

Կսկիծ կա սրտիս մեջը վիրավոր՝

Ջոր արևին լու՛յսն անգամ չի բուժեր.

Խորունկ ու ցավոտ մորմոքում մը որ՝

Ա՛հ, պիտի լայննա, երբ իջնե գիշեր:

Բայց հետո սոնետն ավարտվում է լավատեսական առողջ տրամադրությամբ.

Ու պիտի ապրի՛մ, վիշտը նոր ուժեր

Կը բերե հանկարծ հոգվույս սիրավեր,

Կյանքին կը դառնամ դեռ չըրած գիշեր:

Եվ վերջապես՝

Բայց սիրո հույս մը կ'արևե հոգիս:



## Սպասման դրաման «Մեղուները» և «Նավակները» բանաստեղծություններում

«Ծիածան» շարքում Մեծարենցը հայտնաբերում է իրական «ես»-ը: Վերապրելով ինքնաճանաչման դրաման՝ այն անվանում է «սպասման դրամա»: Այս գաղափարը նա արտահայտել է «Նավակները» և «Մեղուները» բանաստեղծություններում: «Նավակները» բանաստեղծության մեջ ասում է.

Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.

Հեռացան ամենն ալ՝ ծրփանուտ Երազիս ավունքեն.

Անձուկին բոցը զիս պաշարե՛ց. Ըսպասման հիվա՛նդ եմ...

Իրոք, Մեծարենցի ողջ բանաստեղծությունը մեղմիկ այրվում է արևի, լույսի, սիրո, բնության և կյանքի կարոտից, սպասումից: Եվ ահա բանաստեղծը դիմում է հողմավար նավակներին, ջրանույշ պայիկներին, իրիկվան հովիկներին, որ դարձնեն իր երազները .

Դարձուցե՛ք՝ նավակներս հողմավար, ջրանույշ պայիկներ,

Դարձուցե՛ք՝ նավակներս դյութավար, իրիկվա՛ն հովիկներ...

Իսկ ահա «Մեղուները» բանաստեղծության մեջ Մեծարենցը մեղուներին անվանում է «տենչանքներու տարագնացիկ մեղուներ»: Պատանեկան անմեղությամբ և լուսավոր հույսերով նա ցրել է տենչանքները՝ «տարագնաց մեղուներ», ցրել է ոսկեծաղիկ մառախուղների և ծաղկաստանների մեջ, մելամաղձիկ երազներ հղել դեպի հեռուները: Մեղուները երամ-երամ թռան- գնացին և անհետացան արևի մեջ՝ ոսկեծաղիկ

մառախուղի մեջ: Եվ դարձյալ սպասումն ու հույսը...Եվ դարձյալ հոգու տանջալի շարժումն ու դրաման, դարձյալ անկումն ու վախը...Չկան մեղուները, կործանվում են տենչանքները, պիտի իջնի գիշեր, դարձյալ հոգին պիտի անցնի երկյուղի ճամփաներով, դարձյալ զանգի տակ պիտի առկայծի հույսի ոսկեբոց անուրջը:

Ահա՛ օրն էլ մըթագնեցավ,

Եվ ես իզուր տարածամ

Դեռ կըսպասեմ անոնց հեքոտ և մեղրագօծ վերադարձին:

Տենչանքներու մեղուների դարձին սպասելով՝ բանաստեղծն ապրում է գիշերվա տագնապը, որ Մեծարենցը վախի ճամփա է անվանում: Նա պիտի անցնի երկյուղի ճանապարհով՝ հույսի բոցը և անուրջը ընկալելու: Բայց հոգնած է այլևս բանաստեղծը՝ տենչանքների մեղուններին սպասելով: Եվ բանաստեղծության վերջում ասում է.

Ու տարածամ այս հաճումին մեջ երջանի՛կ պիտի ըլլամ,

Եթե թունեղ խա՛յէ իսկ բերեն

Ուղեմուլար մեղուներն իմ տենչանքներու:

Եվ հենց ինքը՝ Մեծարենցը, «Ինքնադատության փորձ մը» հոդվածում մեզնից շա՛տ առաջ իր իսկ առաջին գրքի՝ «Ծիածանի» վերլուծության մեջ դիպուկ ու խորն է բնութագրել մարդկային ու բանաստեղծական տրամադրությունների բուն ընթացքը, հոսանքը, տիրապետող ուղղությունը. «Ամբողջ հատորը գրեթե սպասման երկարաձիգ գիշեր մըն է, աղերսանքներով, հոգսերով, ցավերով ու երբեմն ալ կայծկըլտուն հույսերով լեցուն»: Ուրեմն այդ սպասումը՝ շիկացման և ընդգծման բնույթով հանդերձ, ամբողջանում է բազում ապրումներից և դառնում անհատական հարուստ ու բանաստեղծական աշխարհ:

## Եզրակացություն

Ամեն անգամ, երբ խորհում ես Մեծարենցի անձնական ու ստեղծագործական ճակատագրի մասին, զարմանում ես, թե ինչպես է նա այդքան վաղ հասել իսկական գեղարվեստական հասունության, ինչպես է այդքան կարճ ժամանակահատվածում կերտել քանակով ոչ փոքրաթիվ և որակով այնքան կատարյալ գործեր և այն էլ ծանր հիվանդության պայմաններում՝ մշտապես զգալով մոտալուտ մահվան ուրվականը: Իհարկե, ամեն ինչի հիմքը տաղանդն է, որով այնքան օժտված էր բանաստեղծը:

Մեծարենցի առաջին ժողովածուն՝ «Ծիածանը», որը հրատարակվեց 1907 թ.-ին, մեծ արձագանքի արժանացավ գրաքննադատների կողմից, որոնք, գնահատելով երիտասարդ բանաստեղծի անժխտելի տաղանդը, մեծ հույսեր էին հայտնում նրա ստեղծագործական ապագայի նկատմամբ:

Ի՞նչ ուղղությամբ և հոսանքով են ընթանում ծանր ու բարդ ապրումներ ապրող բանաստեղծի զգացումները ժողովածուում: Մեծարենցն ինքն է տվել պատասխան այդ հարցին՝ իրեն անվանելով **«Սպասման հիվանդ», «Լուսաբաղձ հիվանդ»,** իսկ **«Ինքնադատության փորձ մը»** հոդվածում գրել է. «Ամբողջ հատորը գրեթե սպասման երկարաձիգ գիշեր մըն է, աղերսանքներով, հոգերով, ցավերով, ու երբեմն ալ կայծկըլտուն հույսերով լեցուն»: **«Մայասում»** բառը ժողովածուում ձեռք է բերում հոգեբանական խոր իմաստ՝ ձուլվելով բանաստեղծական հյուսվածքներին, ստեղծելով թանձր մթնոլորտ:

Մեծարենցը շատ խորն է ապրում երազանքի ու իրականության բախումը, ուստի նրա քնարական հերոսը փորձում է երազանքի հանգրվան փնտրել՝ այնտեղ իր երազները թաքցնելու և դրանցով ապրելու համար: Նա այդ հանգրվանը գտնում է գիշերային լռության մեջ, երբ անհետանում են կյանքի անհրապույր պատկերները, ժխորային ձայները, և բանաստեղծի հոգին սավառնում է եթերային կապույտներում: Նա պարզապես գիշերերգու չէ, այլ ինչպես ինքն է իրեն բնութագրում՝ «հոգու նավորդ», «իդեայի որսկան»: Այս տրամադրությունների լավագույն արտահայտումն է «Ձմրան պարզ գիշեր»

բանաստեղծությունը, որով սկսվում է ժողովածուն, ինչպես նաև «Միրերգ» բանաստեղծությունը, որը գիշերվան նվիրված մի գեղեցիկ ձոն է:

Գիշերվա խավարով բանաստեղծը ոչ թե պարուրվում ու ննջում է, այլ իր տենդագին հայացքով փնտրում է լույսի ու շողի շատրվաններ, որոնք խորհրդանշում են կյանքն ու կենսասիրությունը:

Լինելով մեծ գիշերերգու՝ Մեծարենցը նաև արևի երգիչ է: Արևին նվիրված բանաստեղծություններում («Այգերգ», «Ցայգն է պայծառ», «Առտվան արևին մեջ», «Արևին», «Տերևները կրսեին», «Կերթա արևն իր գատիկին» և այլն) արտահայտված է նրա բուռն սերը կյանքի նկատմամբ: Ասվածի լավագույն օրինակն է «Արևին» բանաստեղծությունը, որը շատ գրաքննադատներ համարել են նրա ստեղծագործության ամենավառ փայլատակումներից մեկը: «Շողա՛, Շողա՛, բարի՛ արև, հիվան՛դ եմ» կրկնվող տողը բանաստեղծի անկեղծ պաղատանքն է, որն արտահայտում է ապրելու նրա մեծ փափագը:

«Ծիածան» ժողովածուում Մեծարենցը հայտնաբերում է իրական «ես»-ին: Ապրելով «Ինքնաճանաչման դրաման» նա դա անվանում է **«սպասման դրամա»**: Այս գաղափարն է արտահայտված «Նավակները» բանաստեղծության մեջ նա սպասում է ջրանույշ պայիկների ու իրիկվան հովիկների վերադարձին, որ վերադարձնեն իր տենչանքները, իսկ «Մեղուները» բանաստեղծության մեջ՝ «Տենչանքներու տարագնացիկ մեղուներին», որոնք, երամ-երամ թռչելով, անհետացել են արևի՝ ոսկեծաղիկ մառախուղի մեջ: Նրանց վերադարձին սպասելով՝ բանաստեղծն ապրում է գիշերվա տագնապը՝ երկյուղի ճանապարհը: Բանաստեղծության վերջում նա արդեն հոգնած է տենչանքների մեղուներին սպասելուց և պատրաստ է անգամ «թունեղ խայթ» ստանալ նրանից:

Ժողովածուում բանաստեղծը հասնում է «ես»-ի ինքնաճանաչման գաղափարին, որը «Ծիածան» գլխավոր գաղափարն է, բանաստեղծական հայտնությունը:

Վերջում տրվում են հարցեր՝ ստուգելու աշակերտների՝ վերը նշված նյութի ընկալման չափը, և արժեևորվում է մեծատաղանդ բանաստեղծ Միսաք Մեծարենցը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Հայ նոր գրականության պատմություն, հատ. 5, ԳԱԱ, խմբագիր՝ Ս. Սարինյան, Երևան, 1979:
2. Էդվարդ Զրբաշյան, «Միսաք Մեծարենց», 1977:
3. Հրանտ Թամրազյան, «Բանաստեղծության հազարամյա խորհուրդը «Միսաք Մեծարենց»», Երևան, 1986:
4. Միսաք Մեծարենց, Երկերի ժողովածու, «Ծիածան» ժողովածու, Երևան, 1956:
5. Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան, Հայ գրականություն, 11-րդ դասարանի դասագիրք (հումանիտար հոսք), Երևան, 2010: